

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ

95-րդ Պատրիարք Երուսաղէմի

ՊԱՇՏՈՐ

Մեծ Պահօրի եօթը շաբաթները կը մօտենան իրենց վախճանին: Այս ժամանակաշրջանը քրիստոնեայ հաւատացեալին կ'ընծայէ հոգեւոր ամփոփման և կրօնական խոկումի առիթ մը, տեսնելու իր մարմինը, բայց մանաւանդ հոգին:

Կեանքը միտքին դէմ մղուղ անվերջ կռիւ է, պայքար մը նիւթին, կիրքերու և առաքինութիւններու միջեւ: Մարդը չի կրնար հրաժարիլ Աստուծոյ, ինչպէս նաեւ չի կրնար հրաժարիլ մեղքէն: Ան կը սիրէ իր մարմինը ու կը սիրէ նաեւ հոգին: Թէեւ անոնք թշնամիներ չեն իրարու, այնուամենայնիւ նոյն ուղիէն չեն ընթանար, և Մեծ Պահօց շրջանը անոնց ներդաշնակութեան, համերաշխութեան նպաստող առիթն է:

Դժուար է այս հաւասարակշռութիւնը պահել կեանքի մէջ, մարդիկ երբեմն կը ձգտին հոգեպաշտութեան և կը դառնան ճգնազգեաց: Կ'ուզեն բացուիլ կեանքի ուրախութիւններուն և կը սուզուին աշխարհիկ հաճոյքներու մէջ, կը փորձեն հեռու մընալ մեղքէն, կ'իյնան օրէնքի բռնութեան տակ: Կը նախընտրեն ազատութիւն, և կ'երթան անկարգութեան: Մարդուն համար շատ դժուար է պահել այս հաւասարակշռութիւնը:

Չենք ուզեր վերլուծել Պահօքը, բաներ կան որոնց իրազործումն է որ արժէք ունի: Կը գործանանք միայն ըսելով, որ Եկեղեցւոյ հայրերը մեր օրերու բոլորներուն չափ կը հասկնային մարմինէն, ինչպէս և հոգիէն: Հոգին բուժիլ մարմնի միջոցաւ, աւելին՝ մարմինը բարեկարգել որպէսզի հոգիին ծաղկաւորման, ճիւղաւորման ասպարէզ բացուի: Սանձել մարմինը՝ ասպարէզ տալու հոգիին:

Անշուշտ պահօքը կը սկսի սեղաններու ժուժկալութենէն և մարմնական սանձումներէն, կարենալ հասնելու հոգեկան «տիսիփիլի» հոգեկան պահօրի մը: Անոր բոլոր մեծ ձեռնարկումները կը զգան կարիքը այդ կեդրոնացման: Հին օրերուն, ճգնաւորներ անապատ կը վազէին ո՛չ միայն փախչելու ջուրէն, այլ համախմբելու իրենց հոգեկան ոյժերը իրենց հետապնդած նպատակին ի խնդիր: Անոնք իրենց մարմինը կ'ենթարկէին զրկանքներու և շատ յաճախ խոշտանգումներու, վասնզի կը զգային թէ իրենց հոգին անհանգիստ էր և երկուութեան պայքար կար իրենց ներսը և կը փորձէին միութեան մը բերել:

Պահօքը իր արտաքին ձեւին մէջ պարտադրանք և արարմունք է, սակայն խորքին մէջ պատրաստութիւն է Աստուծոյ: Այս կերպով ան կը դառնայ կրօնական միջոց և հոգեկան փրկութեան առիթ: Այսօր պահօքը չի պահուիր իր վայել լրջութեամբ, վասնզի մեզի կը պակսի զոհողութեանց այն կշիռը, որ մեզմէ կը պահանջուի: Քիչ չէ թիւր անոնց՝ որոնք իրենց ակումներով կը փորեն իրենց գերեզմանները, անոնք՝ որոնք զոհերն են իրենց մարմնին և հոգիին հաճոյքներուն:

Հստակ է թէ պահեցողութիւնը վճիտ մտքին և սրտին սուրբ պահապանն է, և հոս է կրօնական իրաւ նշանակութիւնը Մեծ Պահօց և բոլոր պահօքերուն: Առհասարակ Մեծ Պահօքին կը հեռանան իրենց առօրեայ հոգերէն և մտածումներէն, ինքզինքնին կարենալ տնօրինելու համար: Եւ արդէն ի՞նչ է ինքզինք տեսնել եթէ ոչ դէմ առ դէմ գալ իր մեղքին: Անշուշտ այդ է պատճառը, որ իրական պահեցողներ տխուր կ'ըլլան, տրտմութիւն մը սակայն որ կը բղխի ինքնաճանաչման և մեղքը արժեւորելու

ըզգացումէն, որովհետեւ ան որ իր մեղքը կ'արժեւորէ, ինքզինք է որ կը գնահատէ:

Եօթը եօթնեակները որոնք խորհուրդով և մտածումով Մեծ Պահքը կը հիւսեն, կազմելով վարագոյրները մարդկային հոգիի փրկագործութեան տրամային, կը հիացնեն զմեզ մեր նախնեաց հոգիի նկատմամբ ունեցած փոյթին և նախատեսութեան համար: «Բարեկենդանէն» սկսեալ, որ մարդկային ծագումին քրիստոնէական գաղափարը կը պանծացնէ մինչեւ «Արտաքսման», «Անառակին», «Տնտեսին», «Դատաւորին», «Գալստեան» և «Զարչարանաց» եօթնեակները, որոնք խորհրդաւորապէս կ'երեւին մարդկային կեանքի ու բերումներու գլխաւոր փուլերը մէկը միւսէն գեղեցիկ և տպաւորիչ:

Եթէ Բարեկենդանը ականարկութիւնն է մարդուն երբեմնի երջանիկ կեանքին և իր աստուածային ծագումին, Արտաքսման Կիրակին խորհրդապատկերումն է իր գայթակման և Աստուծոյն և իր երջանկութեան կայանին հեռացումէն: Սակայն մարդը, որ աստուածայինը ունի իր մէջ ու իր հետ, այլասերման մէջ անգամ կու տայ փաստը իր մեծ ծագումին, միշտ կարօտը ունենալով իր կորուսած գերագոյն վիճակին: Անառակի Կիրակին այդ սրտառու խորհուրդին վարագոյրն է որ կը բանայ մեզի: Մարդ իր ամենէն մեղաւոր թարթափումներուն մէջ իսկ կրնայ Աստուծոյ երթալ, եթէ իր մէջ շիջած չէ փրկութեան իղձը: Քրիստոնէին համար ամենէն աններելի բանը՝ անյուսութիւնն է, որ ուրիշ բան չէ բաց մեղքին դէմ կռուիլ չկարենալու վիճակը: Անառակի պատկերը, մեղքի դէմ մղուած և զայն պարտութեան մատնող գերագոյն իրողութեան արտայայտութիւնն է, և մարդկային հոգիին համար չկայ աւելի կազդուրիչ զգացում, քան ինչ որ կը բխի անոր խորհրդաւորած գաղափարէն:

Այդ պայքարին մէկ ուրիշ վիճակն է մարդուն մէջ, Տնտեսին առակը, ուր նիւթը կ'օգտագործուի ի նպաստ հոգիին, այնպիսի հաւասարակշռութեամբ և իմաստութեամբ, որ Աստուծոյ գործակից մարդուն միայն անկ է մտածել ու ընել: Անկանոնութեան ծնունդն է միշտ մեղքը, և անոր դէմ կռուելու լաւագոյն զէնքերն են իմաստութիւն և կամք, զոր այնքան ճարտարօրէն գործածեց Տնտեսը իր խախտուած պատին ու ապագան վերականգնելու: Անկասկած մենք կը յաղթենք եթէ միշտ մեր հետ ունինք Աստուծոյ խորհուրդը և լոյսը այն մութ բաւիղին մէջ, որ աշխարհն է: Այդ լոյսը կարելի է անշէջ պահել հոգիին խորը, Աստուծոյ հետ տեւական հաղորդակցութեան այն եղանակով, զոր աղօթքով միայն կարելի է ունենալ: Հինգերորդ Կիրակիի, Դատաւորի առակին մէջ նկարագրուած աղօթարար կինը՝ այդ խորհուրդն է որ կ'անձնաւորէ:

Ու վերջապէս, իր աստուածատուր երջանկութիւնը կորսնցնելէ վերջ, երբ մեղաւոր մարդը իր արթուն պատուիրանապահութեամբ և հոգեւոր կեանքի զգաստ տնտեսութեամբ կը յաջողի անշեղ ուղղութեան մը վրայ հաստատիլ իր բարոյականը շուտով կը սկսի անոր ներքին վերանորոգումի վիճակը: Փրկութեան քաղցր յոյսը կ'այցելէ իրեն և մօտաւոր Գալստեան այդ զգացումը հետեւաբար, հրճուանք միայն կրնայ պարգեւել:

Իսկ եօթներորդ կամ վերջին, այսինքն Աւագ Եօթնեակը կը ցուցադրէ աշխարհի փորձութեանց յաղթած, հաւատքով, յոյսով և սիրով զօրացած մարդուն՝ այսինքրն ճշմարիտ քրիստոնէին անցքը Քրիստոսի շարչարանքներուն և մահուան արհաւիրքներու մէջէն՝ դէպի անոր յարութեան փառքը, որ պսակն է փրկութեան խորհուրդին:

Եթէ ճիշդ է թէ մարդուն կեանքը անվերջ կռիւ մըն է նիւթական գոհացումներու և բարձրագոյն իտէալներու միջեւ, և թէ ան չկրնար հրաժարիլ ո՛չ իր մեղքերէն և ոչ ալ Աստուծոյն, ի՞նչպէս պէտք է կազմակերպել մարդը, որ ան կարենայ գրաւել արարչագործութեան կարգին մէջ իր բացառիկ տեղը: